շրջանները, որտեղ հունական տառադարձությամբ տոնը կոչվում էր Βαρτουβαρ, Βαρτουβάριά[58]։ Լեռնային Ղարաբաղում առանձնապես պաշտելի էին Մռավի, Մեծ Քիրսի և Դիզափայտի՝ Զիարաթի գագաթները[59]։ Զանգեզուրում Սիսիանի՝ Բիչանաղի լեռնանցքից դեպի հյուսիս շղթայի սեռին բարձրացող Սարվարդի՝ Սալվարդի, Եռաբլուրի՝ Ուչթափալարի սարահարթի հյուսիսային եզրին իր գեղատեսիլ զանգվածով բազմած Մեծ Իշխանասարը՝ Մեծ Իշիխլին, իսկ ավելի հարավ՝ Մեղրու (Մեղրի-Գյունեյի կամ Զավնդուրի, Արևիքի) լեռնաբազուկից դեպի հյուսիս առանձնանում է մի լեռնային ոստ։ Նրա ծայրին ուրվագծվում է Խուստուփի գագաթը, որի զանգվածն ամեն կողմից լավ երևում է իբրև մի վիթխարի հովանավոր-նահապետ շրջակա ավելի կարճահասակ գագաթների ընտանիքի մեջ։

Սարվարդը սրբազան լեռ էր մանավանդ Սիսիանի և հարևան Նախիջևանի վերին գետահովտի թե՛ հայ, թե՛ թուրք բնակչության համար և կրում էր հայերեն Աղօթարան անունը։ Աղոթելիս կամ երգելիս տեղացիք նրա զորությանն ու վկայությանն էին դիմում և նրա կողմն էլ դարձնում երեսները։ Այստեղ մի քանի արդեն անծածկ սենյակներից երկուսն իրար կցված ուխտատեղիներ էին, որոնցից մեկի մեջ խոյաձև արձան կա։ Ուխտավորները քարերի վրայից պատերին կապում էին գույնզգույն շորեր, ցցում էին մեխեր, կախում էին պայտեր և այլն։

Սարվարդից արևելք Լորաձորի նույնպես թե՛ հայ և թե՛ թուրք բնակիչների համար նվիրական էր Քարաժայռը՝ Ղարա-Ղայան, որտեղ գագաթին ոչ գերեզման կա, ոչ խաչարձան, միայն մի հիսուն տարի առաջ այստեղի սրբավայրում Լեռնաշենի՝ Շենաթաղի քահանան շինել էր մի փոքրիկ մատուռ[60]։

Նույնպես Շաղաթ՝ Շեքի գյուղի մոտ Քեշաբերդի սարից հարավ բարձրացող Ճգնավորի սարի գագաթին պաշտվում էր ցցված ժայռը, որը կարծես մարդու ձեռքով պրիզմայաձև քարերից շարված լինի[61]։ Վարդավառի տոնին երկու սրբավայրերն էլ բարեպաշտ բնակիչների ուխտագնացության վայրեր էին։ Ճգնավորի սարի գագաթին երաշտի ժամանակ մատաղներ էին բերում։ Հիվանդ երեխաներին անց էին կացնում ժայռի մեջ գոյացած նեղ ծակով։

Մեծ Իշխանասարը՝ Մեծ Իշիխլին տեղացիների մեջ հայտնի է նաև որպես Սրփ Օհանէսի սար։ Նա ավելի մատչելի է հյուսիս-արևելյան կողմից, որտեղ նրա ստորոտից ոչ հեռու կանաչ ափերի մեջ փռվում է Սևլճի՝ Կարագյոլի կապտավուն հայելին։ Հին ժամանակ այժմյան Գորիսի վարչական շրջանի գրեթե բոլոր գյուղերից բազմաթիվ ուխտավորներ, ո՞րը ձիով կամ ջորիով, ո՞րը բոբիկ ոտով, անողորմաբար բզելով ծանր բարձած անասունը, ընտանիքի մեծ ու փոքրով շրջապատված՝ շտապում էին Վարդավառի տոնին սարը բարձրանալ։ Իրենց բեռը ներքևում՝ սարի ստորոտին թողնելով, նրանք մի քանի արահետներով շարան-շարան ձգվում էին սարն ի վեր դեպի գագա-

58 Անառեան Հր., Հայերէն արմատ. բառ., հ. VI, էջ 596։

59 Ախալքալաքի գավառը, Ջավախքը հնագիտական տեսակետով նկարագրող Ի. Պ. Ռոստոմովն իր „Ахалкалакский уезд в археологическом отношении," СМОМПК, вып. XXV, отд. I, էջ 23 աշխատության մեջ խոսելով այն մասին, որ տեղական հայերը բարձրանալով մեծ Արուլ սարը, այնտեղ երկրպագում էին մի երկար քարի, որ ունի մոտ մեկ սաժեն երկարություն, ավելացնում է՝ «Այս սովորությունը թվում է ինձ զուտ հայկական ծագում ունի»։ Նա նման սովորություն չգիտե վրացական կենցաղի մեջ։

60 Լալայեան Ե., Սիսիան, էջ 58։

61 Նույն տեղը, էջ 86։